

ծինը : Պայման մը սեպուած է որ կանայք այդ բաները չգիտնան պիտոր, հաւանականաբար անոր համար ինչպէս թէ տըղայք չնչէին, որով և իրենք անոր վրայ հսկելու պարտք մը չունենային :

Այս բանս ինծի կը յիշեցընէ որ շնչառութիւնը մեկնելու վրայ ենք, վասն զի մինչդեռ ես կը վերցընէի քեզի այն առագաստին մէկ ծայրը՝ որուն ետեւը բնութիւնը իր լաւագոյն զաղտնիքները տգէտներէն կը ծածկէ, գրեթէ մոռցեր էի զայն :

Թթուածին է ուրեմն որ արիւնը՝ թուքոց սենեակներուն մէջ օդուն հետ որ կը տեսաւորի՝ յաղթանակաբար անկէ կ'առնու. և, առանձին խօսք մ'ընելով, այս թթուածնին շնորհքովն է որ արիւնը թղբերէն սիրտը կը դառնայ, և յետոյ սրտէն գործարանները. այն գեղեցիկ կարմիր վարդագոյն երանգը բերելով՝ որով շնչերակային արիւնը երակային արիւնէն կը զանազանի :

Արդ արիւնը, իւրաքանչիւր ճամբորդութեան՝ այս թթուածինը կը վատնէ, և իր թղբերէն գործարանները, և գործարաններէն թղբերը, յարատեւ ընթացք ընելու էական վախճանը, այս ազնիւ պաշարը անգաղար նորոգելն է, որ շարունակ կը վատնի :

Ի՞նչ բանի կը ծառայէ : Արդեօք արիւնը մեր գործարանաց մէջ կը թողու զայն, և այս այն նիւթերէն մէկն է արդեօք՝ որ մեր վերակեցուն անգաղար խնամք ունի հոգալու մարմնոյն այն պզտի գործաւորներուն, որ իրենց շէնքերուն գործածեն պիտի :

Ոչ, սիրելի օրիորդ : Այն առածը, թէ ժամանակին օդովը չսնանիր մարդ, բոլորովին արդար է, թէպէտ և առանց օդու ապրիլ անկարելի է : Օդը մեր գործարանները չսնուցաներ. ընդհակառակն զանոնք կ'ուտէ, և այն որ մենք կ'ուտենք հետզհետէ անոր անյազ ախորժակը յաղեցընելու կը ծառայէ : Երբ այս կամ այն պատճառի համար ուտելէ կը դադրինք, ինքը միշտ ուտելու կը շարունակէ, և այս բանիս համար է որ այն մարդիկ որ անօթու-

թենէ կը մեռնին՝ այնպէս նիհար կ'ըլլան : Օդը ներսէն կերած է գիրենք :

Ատոր չէիր սպասեր. սակայն հիմա պատրաստուէ՛ զարմանքէ զարմանք. քալելու : Եւ սկիզբ մը տալու համար, հարկ է որ հոս կանկ առնում, և դեռ առաջ չգացած, քեզի մեկնեմ, երեւակայէ ինչ... : Կրակը :

Շատ վերաբերութիւն չկայ, պիտոր ըսես, կրակին և շնչառութեան մէջ :

Շատ աղէկ, ահա ատոր վրայ կը խաբուիս : Բոլորովին մի և նոյն բանն է : Յաջորդ անգամուն քեզի այդ բանը կը ցուցընեմ :

Կը շարունակուի :

ՏՈՒՎՐԻ ԵՒ ՔԱՆԷՒ

ՎՐԱՅԷՆ ԶԴՈՒՆԷԼԻ ԿԱՄՐԱՅԻՆ ՅԱՏԱԿԱԳԻԾ ՊԱՏԿԵՐԸ

(Տես էրես 8-9)

Անցած տարուան Բազմավիպին 237 իջին մէջ Տուրի և Քալէի մէջ տեղ ձգուելի կամրջին առաջարկութեանը վրայ խօսելով, գրինք նաև մասամբ մը կամրջին պատկերը, ինչպէս որ մտածեր է զայն Պ. Պունդէ ճարտարապետը : Հիմա այս թերթովս անոր այլ և այլ մասանց յատակագիծ պատկերը կը ներկայացընենք :

1. Պատկերը կամրջին բոլոր ընդարձակութիւնը կը ներկայացընէ, որ տասը հատ ցցապատներէ կը բաղկանայ, որոնց իւրաքանչիւրը 300 մեդր երկայնութիւն ունի : Այս ցցապատներու առան մէկը հինգ ուղղահայեաց վանդակներէ ձևացած է, որոնք երկրթի ամուր ձողերով մէկմէկու հետ կապած են : Ինչպէս ըսած ենք արդէն, կամուրջը Գազդիոյ դին՝ Պլան-Նէ հրուանդանին վրայ կը հանգչի, և Անգղիոյ դին Շեքսպիրի ժայռին վրայ : Կ'ուզենք նաև յիշեցընել որ այս երկու բարձրաւանդակաց մէջի հեռաւորութիւնը, հանդերձ երկու կողմի զառիվայրներովը որ 300 մեդրի չափ կան, 29,700 մեդր է :

27. Պատկերը կամրջին ցցապատներ

րուն մէկ կամարածիգը կը ներկայացընէ , հանգերձ երկրորդի մը սկզբնաւորութեամբ : Պատկերը կը ցուցընէ թէ կամրջին բարձրութիւնը այնչափ է՝ որ մեծամեծ նաւեր ալ կրնան տակէն անցնիլ :

37. Պատկերը կը ցուցընէ թէ կամուրջը որչափ բարձրութիւն ունի ցամաքի յենարանին կողմէն : Զրին մէջ տեսնուած Բ կէտերը վեր կը բռնեն մալուխը , որ կամարասեանց ուղղութիւնը կը ցուցընէ , ու զանոնք մէկմէկու հետ կը կապէ : Կամրջին երկու եզերքէն պսակներ կան , որոնց վերցուած տեղերէն շոգեկառաց կառատորմիդ մը կը տեսնուի : Գամաքին յենարանին մօտ կամրջին թանձրութիւնն է 60 մեդր , և ծովուն հարթաչափէն 52 մեդր բարձր է :

47. Պատկերը կամրջին և մէկ յենարանին յատակը կը ցուցընէ : Մէջտեղը

շոգեկառաց ճամբուն չորս գիծ ձողերը կան (O), երկու եզերք կամ պսակ (P) որ հասարակ կառաց ու շոգեկառաց ճամբաները մէկմէկէ կը զատեն , և հետի գնացող մարդոց համար (QR) եզերքի երկու ճամբաները :

57. Պատկերը ցամաքի յենարանին միջին բարձրութիւնը կը ցուցընէ :

67. Պատկերը կամրջին հատուածն է . SSS ձողերն են որ կամրջին ճամբան վեր կը վերցընեն : Ծանրութիւնը կամրջին ամեն կէտին վրայ հաւասարապէս բաժնած է . և ընդհանուր շէնքը զարմանալի է ամրութեան ու թեթևութեան կողմանէ :

77. Պատկերը կամարասին մը կը ներկայացընէ , զոր նաւաքարշ շոգենաւ մը հաստատուելու տեղը կը քաշէ կը տանի :

87. Պատկերը կամարասեան մը հատուածը կը ներկայացընէ :

ԶՕՐՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԵԱՆ

Ինչո՞ւ դուք կայտառ ու զըւարթ տըղայք՝
Ալեւոր գլխուս վըրայ զարմանայք .
Այդ ձեր խոսքովքն ալ՝ հոգերու տակ
Այսպէս պիտ' ըլլան գունաթափ ճերմակ :
Ես ալ նըման ձեզ ունեցեր եմ մայր ,
Որ գուրգուրալով ճակատէս ի վայր՝
Այտիցս աղուամազ ցօղիկն համբուրէր ,
Պապաջուն լեզուս իր պարտքին կըրթէր :
Ինքն՝ երբ գիշերուան փռուէր անկողին՝
Կու ճըկեցընէր ծընկիկս ի գետին ,
Եւ ձեռքը գլխուս վըրայ դընելով՝
Կ'աղօթէր ինծի համար՝ ծունկ գալով :
Բայց սակայն հասաւ օր մ'ալ ահաւոր .
Մինչ ես վազէի յանկողին իմ մօր՝
Անգութ ձեռուրներ զիս մէկ զի հրեցին ,
Եւ մօրըս համար՝ մեռաւ գնաց ըսին :
Գացի փրցուցի ճերմակ վարդ մ'աղուոր ,
Եկայ կամացուկ զըրի քովն անոր .
Կարծէի թէ քուն կ'ըլլայ կարգէ դուրս .
Զի ձայնն անոյշ չէր գար ականջներուս :